ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԷՍԷՍԹԻ ՍՊԸ-ն ՀՀՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-2024/4 -1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
9	Գրապահարանը ամբողջությամբ (բացառությամբ հետնապատից) պատրաստված է լամինացված 18 մմ հաստությամբ E0դասի ՓSU-ից, արտաքին չափսերը՝ 800x 400 x 1800 մմ (L x Խ x Բ): Գրապահարանը պատրաստված է էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, ողորկ է, առանց ծլեպների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները հարթ և անվտանգ են, անհրաժեշտության դեպքում՝ անվտանգությունն ապահովող հատուկ դետալներով: Ամուր են պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը պարտավորվում է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում և/կամ ամրացում: Ապահովված է էսթետիկությունը, մասնավորապես՝ հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Ապահովված է էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը հարմարավետ է ըստ նպատակային նշանակության շահագործման ժամանակ: Գրապահարանը ունի 300 մմ բարձրությամբ 5 դարակաշար, որոնցից վերևից սկսած 2-ը փակվում են եզրերը մշակված, թրծված թափանցիկ երկփեղկ ապակյա դռներով՝ յուրաքանչյուրը 2 ծխնիով, իսկ ներքևի 3-ը՝ լամինացված 18 մմ հաստությամբ E0դասի ՓSU-ից երկփեղկ դռներով՝ յուրաքանչյուրը 2 ծխնիով: Բոլոր դռները ունինմետաղական օվալաձև բռնակներ:Դարակները պատրաստված են լամինացված 18 մմ հաստության E0դասի ՓSU-ից, որոնց աշխատանքային հարթության եզրերը շրջափակվեն 1-2 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4-1.0 մմ հաստության պոլիմերային

	եզրաժապավենով (PVC կամ համարժեք)։ Աշխատանքային հարթությունը անփայլ է, բաց գույնի (բացառությամբ սպիտակի)։ Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով։ Գրապահարանի Հետնապատը 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից(ԴՎՊ) և նույն Ε0դասի ΦSU գույնի։ Պահարանը ամբողջ պարագծով ունի շրջանակաձև ոտքեր։ Ոտքերը կարգավորվող են։ Ոտքեր հանդիսացող, տակը դրված ուղղանկյուն հենակի արտաքին չափսերն են՝ 700 x 300 x 100 մմ (Lx Խ x Բ), որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8 մմ է։ Նմուշները մինչև մատակարարում կհամաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ կներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն)։ Սահմանվում է երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով։ Ապրանքի վրա առկա է մակնշում, որում նշված են արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն։ Մակնշումը հայերեն, թույլատրվում է նաև միջազգային լեզվով (մասնավորապես՝ անգլերեն, ռուսերեն), ընթեռնելի տարբերակով։ Մակնշումը այնպիսի հատվածում է, որտեղ չի խաթարվում ընդհանուր էսթետիկ տեսքը։ Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում)։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ԷՍԷՍԹԻ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-2024/4 -1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
9	